ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0009, Տերյան 89, 010-51-54-67

N 6254-2022

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Ի պատասխան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 01/2552-2022 գրության՝ որով առաջարկում է սահմանափակել քաղաքացիներ Հայկ Ղազարյանի և Սեմյոն Բաբայանի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների մասնակցության հնարավորությունը՝ վերջիններիս ոչ պատշաճ վարքագծի և պահվածքի պատճառով, հայտնում եմ հետևյալը՝

Հանրային ծառայության անցնելու իրավունքը ամրագրված է Սահմանադրության 49-րդ հոդվածում, որի համաձայն՝ *յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով*: Սահմանադրական այս նորմն իրավական ամրագրում է ստացել հանրային ծառայության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերում:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքի նշված նորմից բխում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է այն պահանջները, որոնք բավարարելու դեպքում քաղաքացին իրավունք ունի մասնակցելու մրցույթին: Հարկ է նշել, որ հանրային ծառայության, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության անցնելու իրավունքը սահմանափակվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածում թվարկված պայմանների (դրանցից որևէ մեկի) առկայության դեպքում: Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ քաղաքացու՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համալրման մրցույթին մասնակցությունը չի կարող սահմանափակվել «կանխակալ», իրավական հիմնավորում չունեցող հանգամանքների հիման վրա: Ինչ վերաբերվում է

քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներին քաղաքացիներ Հայկ Ղազարյանի և Սեմյոն Բաբայանի մասնակցությունը հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունենալու հիմքով սահմանափակելու տարբերակին, ապա պետք է նշեմ, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավակարգավորումների, համապատասխանաբար անձի՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու, կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով տառապելու և սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն ունենալու դեպքերի վերաբերյալ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի N 1 Ձև-ի 2-4-րդ կետերում նախատեսվել են դիմումատուի կողմից համապատասխան տեղեկատվություն տրամադրելու դրույթներ: Մրցույթին մասնակցելու դիմում ներակայացնելու դեպքում քաղաքացին իրավունքի ուժով պարտավոր է պատասխանել հարցերին, միաժամանակ նախազգուշացվելով քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում, կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, զբաղեցված պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Անդրադառնալով քաղաքացիներ Հայկ Ղազարյանի և Սեմյոն Բաբայանի ոչ պատշաճ վարքագծին, և այդ ուղղությամբ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ձեռնարկած քայլերին, պետք է նշեմ, որ 2019 թվականից սկսած վերջիններս մասնակցում են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներին և նմանատիպ խնդիրներ ստեղծում ոչ միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում, այլև գրեթե բոլոր մարմիններում, այդ թվում՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակում: Քաղաքացիական ծառայության գրասենյակը տարբեր պետական մարմիններից թե՛ բանավոր, թե՛ գրավոր կարգով ստացել է բազմաթիվ բողոքներ, որոնց հիմքում դրված է մեկ խնդիր՝ վերջիններիս պահվածքն ու վարքագիծը հաշվի առնելով, ոչ միայն միջոցներ ձեռնարկել օրենքի ուժով պատասխանատվության ենթարկելու համար, այլ նաև հոգեկան առողջության հետ կապված հարցում իրականացնել:

Ելնելով ստեղծված իրավիճակից, 2021 թվականի հուլիսի 16-ին Քաղաքացիական ծառայության գրասենյակը N 42/44/23880-2021 գրությամբ դիմել էր Առողջապահության նախարարությանը անձի հոգեբուժական վկայարկման՝ հոգեկան խանգարման առկայությունը կամ բացակայությունը պարզելու և այլ կարևոր հարցերի վերաբերյալ պատասխաններ ստանալու համար: Առողջապահության նախարարին ուղղված գրությունը ներկայացնելու պահին դեռևս ընդունված չի եղել Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի

թիվ 90-Ն հրամանը, որով սահմանվել է արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության և սպասարկման (այդ թվում՝ հոգեբուժական վկայարկման) տրամադրման կարգը: Հիշյալ կարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առանց անձի համաձայնության (խնդրո առարկա դեպքում կարծում ենք նշված անձանց համաձայնությունը առկա չի լինելու) վկայարկումն իրականացվում է հետաքննության մարմնի (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի), քննիչի, դատախազի, դատարանի (իրենց վարույթային պարտականությունները կատարելիս) կողմից արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպություն ներկայացված գրավոր դիմումների հիման վրա: Այսինքն՝ թե՛ Քաղաքացիական ծառայության գրասենյակը, թե՛ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման մրցույթ անցկացնող պետական մարմինները բացառապես համալրման գործընթացի ընթացքում չունեն հոգեբուժական վկայարկման ինստիտուտը կիրառելու իրավական հնարավորություն:

Չբավարարվելով Առողջապահության նախարարության կողից տրված պատասխանով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակը 2021 թվականի օգոստոսի 18-ին՝ թիվ 28151 գրությամբ, կրկին դիմել էր Առողջապահության նախարարությանը՝ հասցեագրելով գրությունը նախարարին, խնդրելով տրամադրել տեղեկատվություն քաղաքացիներ Հայկ Ղազարյանի և Սեմյոն Բաբայանի համապատասխան կենտրոններում հաշառված լինելու կամ N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկով տառապելու վերաբերյալ: Ի պատասխան Քաղաքացիական ծառայության գրասենյակի հարցման՝ Առողջապահության նախարարությունը պատասխանել էր, որ այդպիսի տեղեկությունները բժշկական գաղտնիք են համարվում և տրամադրվում են *տվյալների սուբյեկտի կամ լիազորագրով հանդես եկող ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի գրավոր հարցման հիման վրա:*

2021 թվականի հոկտեմբերի 21-ին՝ թիվ 36589 գրությամբ և ի լրումն նշված գրության՝ նոյեմբերի 2-ի թիվ 37843 գրությամբ, Քաղաքացիական ծառայության գրասենյակը Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն էր ներկայացրել անհրաժեշտ ապացույցներ՝ փաստաթղթերի փաթեթ և հարցազրույցի փուլի տեսաձայնագրություններ, խնդրելով միջոցներ ձեռնարկել Սեմյոն Բաբայանի նկատմամբ, մասնավորապես՝ քննարկել վերջինիս նկատմամբ իրավական գործիքակազմ կիրառելու հնարավորությունը: Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունից Քաղաքացիական ծառայության գրասենյակը մինչ օրս որևէ պատասխան չի ստացել:

Այնուամենայնիվ, պայմանավորված վերջին ժամանակներս քաղաքացիներ Հայկ Ղազարյանի և Սեմյոն Բաբայանի հերթական «ակտիվությամբ», որն արտահայտվում է համապատասխան մարմիններում մրցույթների մասնակցության ժամանակ տարբեր խնդիրներ ստեղծելով, թեստավորման և հարցազրույցի փուլերի ընթացքը խանգարելով, աղմկելով, մրցույթի պատասխանատուներին և

հանձնաժողովի անդամներին անհարկի վիրավորելով և քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման մրցույթների վերաբերյալ անվստահության մթնոլորտ ստեղծելով, Քաղաքացիական ծառայության գրասենյակը սույն թվականի հոկտեմբերի 25-ին՝ թիվ 42/44/35059-2022 գրությամբ և հոկտեմբերի 27-ին՝ թիվ 42/44/35369-2022 գրությամբ, հարցում է ուղարկել Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն վերջիններիս հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ**